

կրօնացիները, յետոյ նա փխսեց: ապա առաջացաւ ուշա-  
 գնացութիւն: անդամները սկսեցին սառել եւ սրտի գոր-  
 ծունէութիւնը թուլանալ իսկ մարդը ստամոքսի ցաւից եւ  
 փխսելուց յետոյ, իսկոյն ննթարկուեց խոր ուշագնացու-  
 թեան: Յառաջ եկան ուրեմն միեւնոյն երեւոյթները՝ որ սո-  
 սորական են թունաւորութեան. փխսում, սուր՝ ցաւեր ստա-  
 մոքսի մէջ, յետոյ լուծումն եւ ցնցումներ, մառմի սառչե-  
 լը եւ սաստիկ գունատութիւն:

Մարդու զարկերակը երկու ժամի շափ քորորովին  
 անկատարել էր: Երեք ժամից յետոյ կիճը ուշքի եկաւ,  
 իսկ մարդը ուշքի եկաւ 19 ժամից յետոյ, եւ նա ոչինչ  
 չէր յիշում իրան հետ պատահածից: Այդ մեղքից ու-  
 տեցողին երկու կատուի, որոնց հետ պատահեցին նոյն երեւոյթ-  
 ները, ինչ որ մարդ ու կիճը հետ:

Մեղքը քննութեան ննթարկուեց, քայք նրա մէջ  
 թոյնի հետք չը գտնուեց:

— Սո վ եւ ժամտախտ շնդկաստանու մ:  
 Բոմբէյից հասած լուրերը շատ անմիջեմարական են, սոյն  
 շնդկաստանում անխուսափելի է, արդէն իսկ գաւառներից  
 սովալուէ ժողովուրդը թափառում է Բոմբէյ: Բոլոր հիւսի-  
 սային շնդկաստանում աշնանացանի հոնձ չը կայ եւ զար-  
 նանացանի վրայ եւս յոյս դնել չէ կարելի: Բացի Բենգա-  
 լիայից սոյն ամբողջ շնդկաստանին սպառնում է: Սովի  
 հետ միասին սկսուել է եւ ժամտախտը, որ 21 ժամում  
 սպանում է վարակուածին, դժբախտաբար ժամտախտն  
 սկսել է տարածուել եւ հասել է մինչեւ Կալկաթա: Անգ-  
 լիական տէրութիւնը մեծ ջանքեր է անում ժողովրդին օգ-  
 նելու, արդէն իսկ մեծ քանակութեամբ ցործն է գտնում  
 Ռուսաստանից, ամէն օր Օդեսայից ցործնով բեռնաւորուած  
 նաւեր են ուղղուում դէպի շնդկաստան: Ռուսաց մի քանի  
 թեքներ ստորագրութիւն են քաց արել յօգուտ շնդկ սո-  
 վալներին:



**Ա Ջ Գ Ա Յ Ի Ն .**

**ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ .**

**Մ Ա Յ Ի Ա Թ Ո Ռ .**

**ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ**

Նոյեմբերի 14-ին Նորին կայսերական  
 Մեծութեան Մայր թագուհւոյ ծննդեան օրը  
 Ազգիս վեհափառ Հայրապետը ստղծեց մի  
 շնորհաւորական հեռագիր, որին ի պատաս-  
 խանի ստացուեցաւ հետեւեալը .

ԷՋՄԻԱՄԻՆ .

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ .

Ընկալարուք եւ յայա արարէք հօտին Ձե-  
 րում զանկեղծ շնորհակալիս իմ՝ վասն շնորհա-  
 ւորութեանցդ եւ բարեմաղթութեանց:

ՄԱՐԻԱ .

Նորին վեհափառութեան հեռագիրը  
 կազմուած էր այսպէս .

ԳՊԳՁԻՆՕ .

ՆՈՐԻՆ ՄԵՄՈՒԹԵԱՆ .

ԹԱԳՈՒՀԻՈՑ ԿԱՅՍԵՐՈՒՀԻՈՑ ՄԱՐԻԱՅ  
 ՖԵՕԳՈՐՈՎՆԱՅ .

Հաճեսցիք ընդունել Մմենաբարեպաշտ  
 Թագուհի զանձնուէր շնորհաւորութիւնս եւ  
 զջերմագին բարեմաղթութիւնն իմ եւ հօ-  
 տին իմոյ ի հանդիսաւոր աւուր ծննդեան  
 Չերդ կայսերական Մեծութեան: Պահպանե-  
 սցէ զՉեզ Տէրն Ամենակալ ի բազում ամս:

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ .



Ամսոյս 26-ին Նորին կայսերական Բար-  
 ծրութեան Թագաժառանգին Ռուսաց Անուա-  
 նակոչութեան տօնի օրը Ազգիս վեհափառ  
 Հայրապետը մի շնորհաւորական հեռագիր ու-  
 դարկեց, որին ի պատասխանի ստացուեցաւ  
 հետեւեալ հեռագիրը .

ԷՋՄԻԱՄԻՆ .

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ . ՄԿՐՏՁԻ .

Ի բոլոր հոգւոյ շնորհ ունիմ ի Չերդ  
 վեհափառութեանէ յաղագս վերառաքեալ  
 առ Տէր Աստուած աղօթից վասն առողջու-  
 թեան իմոյ եւ յաղագս մատուցեալ շնորհա-  
 ւորութեանցն:

ԳԷՈՐԳԻ .

Նորին Ս . Օծովեան հեռագիրը կազ-  
 մուած էր այսպէս .

ԱՐԱՍԹՈՒՄԱՆ .

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՉՐՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱԺԱՌԱՆԳ ՅԵՉԱՐԵԻԺԻ .

Վերառաքելով աղօթս ջերմագինս առ  
 Աթոռն Բարձրելոյն վասն քաջառողջութեան  
 եւ բարօրութեան Բարձրութեան Չերոյ, յար-  
 գանօք շնորհաւորեմ զՉեզ, Ամենաբարեպաշտ  
 Տէր, յաւուր Անուանակոչութեան Չերդ  
 կայսերական Բարձրութեան:

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ




— Ամսոյս սկզբներին Մայր Աթոռս ժամա-  
 նեցին Շամախու առաջնորդ գերապատիւ Մակար  
 եպիսկոպոս եւ Բեասարաբոյ առաջնորդ բարձրապա-  
 տիւ Յուսիկ վարդապետը, որոնք վիճակային կա-  
 րեւոր գործերի համար հրահանգներ ստանալով  
 կրկին ուղևորուեցան իրենց պաշտօնատեղին:

— Մայր Աթոռոյս գանձապետութեան պաշտօնը Հայրապետական հրամանով ստանձնեց Գերապատիւ Գրիգորիս եպիսկոպոս Գառնակերեանցը:

— Արժանապատիւ Գէորգ վարդապետ Ռըշտունու փոխանակ վանուցս հիւրընկալ կարգուեցաւ առ ժամանակ Արժ. Թազէոս վարդապետ Առիւծեանցը:

— Անի քաղաքի նախկին վանահայր Էմանյեակ վարդապետը կարգուեցաւ Ս. Էջմիածնի ազարակի կառավարիչ:

— Բարեպաշտուհի այրի Եղիսարեթ Գալըստեան Մարտիրոսեանցը Մայր Աթոռիս նուիրել է երկու հարիւր ռուբլի խնդրելով որ ս. Յովհաննու նարապետի տօնին յիշուին իւր ամուսին Յակովբի և որդիներէ՛ր Յովհաննիսի Մկրտչի և նատարինէի անուններն:



### ✦ ՊՈՂՈՍ ՎԱՐԳԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐԵԱՆՆ.

Նոյեմբերի 2-ին կարճատե հիւանդութիւնից յետոյ վախճանուեց միաբանութեանս հնագոյն անդամներից Հաղարծնի վանահայր Արժ. Պօղոս վարդապետ Տէր Մարգարեանը: որ գործով կանչուած էր Ս. Էջմիածնի Անհապատ Հայրապետի հրամանով Հաղիւ ժամանել էր այստեղ: Երբ տիրիւմով հիւանդացաւ և մի քանի օրից յետոյ աւանդեց հոգին: մեծ վիշտ պատճառելով իւր միաբանակից եղբայրներին: Հանգուցեալի թաղումն տեղի ունեցաւ մահուան յաջորդ օրը: Մայր Յաճարում հանգիստը պատարագին ներկայ էր և Անհապատ Հայրապետը: Հանգուցեալի արժանիքները զրուսացեց միաբանութեանս աւագ անդամներից Բարձր. Սրբազան Սուրբաս արքեպիսկոպոսը մի զգացում զամբանակաւոր որ մեծ տպաւորութիւն թողեց ունկընդիրների վրայ: Պօղոս վարդապետը ծնուել է 1830 թ. Երևանի Քանաքեռ գիւղում: 1841—1848 թ. սովորել է Մայր Աթոռիս ժառանգաւորաց դպրոցում: ուր և յաջողութեամբ աւարտել է: Աւսումն աւարտելուց յետոյ 1848—1858 թ. եղել է վանական կառավարութեան անդամ: միևնոյն ժամանակ և լուսարար: Ցարդ ևս յիշուում է վանքիս մէջ Պօղոս վարդապետի հմուտ լուսարարութիւնը և քաղցրաձայն երգեցողութիւնը:

Երջանկայիշատակ ներսէս Ե. Վաթուղիկոսի օրով 1851 թ. ստացել է աւագ սարկաւազութիւն: իսկ արեղայութիւն ստացել է 1856 թ. Գօրու յաջորդ է նշանակուել 1859 թ.: 2օրս տարուց յետոյ՝ 1863 թ. համաձայն իւր խնդրի յանուն Անհապատ Վաթուղիկոսի՝ արձակուել է Գօրու փոխանորդութիւնից: իսկ 1864 թ. մայիսի 15-ին Բարձրագոյն հաստատութեամբ նշանակուել է Սինօզի անդամ: 1867 թ. յունիսի 30-ին կազմած Սինօզի օրագրութեամբ կարգուած է Վազրիս գաւառի Հայոց վանօրէից կալուածոց կառավարիչ: ընդ սմին և Հաղարծնի վանահօր պաշտօնակատար: 1892 թ. օգոստոսի 17-ին նշանակուել է Գանձակի փոխանորդ: միևնոյն ժամանակ վարել է Հաղարծնի վանահայրութեան պաշտօնը:

Ամենքին յայտնի է Պօղոս վարդապետի ան-

գուլ աշխատանքն Հաղարծնի վիճելի հողերի և անտառի համար: Գրեթէ 30 տարի դատ է վարել նա այդ կալուածները վաճիքի անունով հաստատել տալու համար: Միմիայն հանգուցեալի անխնջ աշխատանքին է պարտական այսօր Հաղարծնի վանքը իւր կալուածներով և բարեշինութեամբ: Հանգիստ ոսկերացի: ով անխնջ մշակ եկեղեցւոյ:

Վ. ՃԵՄԱՐԱՆ.

### Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն.

Մայր Աթոռի Հոգևոր Ծեմարանի վարչութիւնն այսու յայնու՛մ է ի գիտութիւն հասարակաց: որ բարեյիշատակ բժիշկ Գէորգ Աւետիքեան Տիգրանեանց իւր կտակով որ հաստատուած է Տազանրօզի նահանգական դատարանում 1894 ամի փետրուարի 17-ին: աւանդել է Ծեմարանիս վարչութեանը կատարել հետեւեալ պարտականութիւնները:

Ա. Կտակի 3. յօդուածով որոշուած է քսան և չորս հազար ռուբլի դրամագլուխ: որի տոկոսիքով Ծեմարանիս մէջ մշտապէս պահուելու են հանգուցեալ բարերարի անուամբ երեք որդեգիր:

Բ. Կտակի 4. յօդուածով որոշուած է հինգ հազար ռուբլի որի տոկոսիքով պէտք է տպուին հայերէն դասագրքեր և ձրխարար բաժանուին չքաւոր հայ երեխաներին:

Գ. Կտակի 7. յօդուածով որոշուած է երկու հազար ռուբլի իրրև պարգև այն հեղինակին: որը կը կազմէ եւ կը տպէ հայերէն լեզուով Հայոց արմատական բառերի բառարան:

Դ. Կտակի 8. յօդուածով որոշուած է երկու հազար ռուբլի այն հեղինակին: որը կը կազմէ եւ կը տպէ հայերէն բառարան Հայոց հոմանիշ բառերի:


Մայր Աթոռի Հոգևոր Ծեմարանի վարչութիւնն: արդէն հրատարակած լինելով 1894 ամի նոյեմբեր ամսի «Արարատի» մէջ բարեյիշատակ Տիգրանեանցի կտակի Ծեմարանիս վերաբերեալ յօդուածների թարգմանութիւնը: այսու պատիւ ունի հրատարակելու ձեռնհաս անձինքներին մինչև մէկն սպրիլի 1897 ամի ներկայացնել վարչութեանս իրենց պատրաստի աշխատութիւնները՝ զասագրքերն և բառարանները՝ կտակի տրամադրութեանս համեմատ քըննելու և անօրինելու համար: յայտնելով միևնոյն ժամանակի որ հանգուցեալ բարերարի անունն որդեգիր ընտրուած են Ծեմարանիս հետեւեալ անները:

1. Ա. լսարանի ուսանող Փսերեան Եղիազար: 2. Վլթրը գիւղացի: Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ թեմից:

2. Զ. դասարանի աշակերտ Ալասան Ալասի Եղեկախցի, Աստրախանի թեմից.

3. Դ. դասարանի աշակերտ Բիւր-տեան Նիկողայոս, Աքքիւրմանցի, Նոր Շախի-ջեանի և Բեսարարիոյ թեմից:

Տեսուչ Ճեմարանի Կ. Կոստանեան



† ԱՆԳՊԱՆ ԱՐՈՒՄՆԵՐ. — Գ. Ճեմարանի

ուսուցչական խումբը մի դառն կորուստ ունեցաւ. ամսոյս 16-ին, չորեքօրեայ հիւանդութիւնից յետոյ, կիրեց իւր մահականացուն ուսուցչական խմբի աւագագոյն անդամը՝ Գ. Աարզան Արոյեանը, Անհատաւ Հայրապետի շնորհառատ հրամանով հանգուցեալի մարմինն ամփոփուեցաւ ս. Գայեանէի վանքի հիւսիսեկողմը, Ստեփաննոս Պայասնեանի կողքին: Հանդիսաւոր յուղարկուողութեան մասնակցում էր միարանութիւնն: Ճեմարանն և զիւրի հասարակութիւնը, Պամբնական խօսեց Բարձր Սուրբիս արքեպիսկոպոսն բնարան աննելով սաղմոսից հետեւեալ խօսքերը. «Մեռաւ արդարն և եթող զզջումն բազումս, Սրբազան ճառասօսն, որ 1870 թուականին Ախալցխայում առաջին անգամ ականատես էր եղել հանգուցելոյ ուսուցչական գործունէութեան և պապ Երեանում և ս. Էջմիածնում վկայ նրա համեստ և բարեխիղճ պաշտօնակատարութեան, շեշտեց ողբացեալ Աարզանի արժանիքներն և հրաւիրեց ձեռն կարկառել նրա ազգի խնամքին թողուած ընտանեաց:

Գերեզմանի վրայ Ճեմարանի աշակերտներից մէկը թարգման հանդիսացաւ այն դառն կակնին, որ զգում էին իւր ընկերներն սիրելի և հայրանման ուսուցչի մահուան վրայ:

Աարզան Արոյեանը շառաւիղ է Գանաբեռնի Արոյեանց համբաւաւոր գերբաստանի և որդի մեր անմահ բանաստեղծ Խաչատուր Արոյեանի, նա ծնուել է 1840 թուին, սկզբնական կըրթութիւնն ստացել է իւր հօրից, իսկ միջին ու բարձրագոյն կրթութիւնն Պորպատում, ուր ուսաց լեզուի ուսուցչի իրաւունք ձեռք բերելով 1862 թուից սկսել է իւր ուսուցչութիւնը Օտաղէի գաւառում: Բայց Խ. Արոյեանի որդին չէր կարող երկար ժամանակ օտար երկրում ծառայել, նա մի քանի տարուց յետոյ վերադարձել է Առվկաս և նուիրուել հայ դպրոցին ծառայելով երբեմն Ախալցխայում, Թիֆլիզում և այս Երեանում և իջմիածնում, Աերջին քսան տարուան ընթացքում նա անընդհատ ծառայել է Գ. Ճեմարանում և Երեանի թեմական դպրոցում:

Այս ուսումնական տարուան սկզբում նոր պաշտօն ստանալով Մայր Աթոռոյս սպարանում՝ քիչ զատեր միայն ուներ Ճեմարանում, ուր տարե-

կան ոտձիկ էր առնում 540 ուսուցիչ, որ Անհատաւ Հայրապետի բարեհաճութեամբ պիտի վճարուի նորա ընտանիքին մինչև առաջիկայ սեպտեմբեր, Հանգուցեալը թողել է 5 զաւակ, երեք տղայ և 2 աղջիկ, ամենից մեծը 18 տարեկան և փոքրագոյնը 2 տարեկան: Երկու որդիքն ուսանում են Ճեմարանում, իսկ աղջիկն Երեանի աղջկանց վարժարանում: Իւր երեանամեայ ազգային ծառայութեան ասպարիզում միշտ շափաւոր ոտձիկ ստանալով հազիւ պահել և պահպանել է նա իւր ընտանիքն, որ այսօր առանց որ և է ապահովութեան է մնացել և յանձնուած է ազգի խնամքին:

Մեր հաւատն անխախտ է, որ ազգն իւր համեստ մշակի ընտանիքն, Խաչատուր Արոյեանի թոռներին անխնամ չի թողնիլ, Անհատաւ Հայրապետը բարեհաճել է թողլ տալ Ճեմարանի վարչութեան այդ խնամքի գործը կազմակերպելու և ազգի աջակցութեան դիմելու: Ճեմարանի վարչութիւնն այդ դիմումն արել է արդէն և մենք վստահ կնք: որ նա յուսախար չի լինիլ, Այս յուսով է ահա որ խմբագրութիւնս ևս դիմում է ամենքին, օգնութեան ձեռն մեկնելու հրաւիրելով:

ՆԱՄԱԿ ԽՐԵԱԳՐՈՒԹԵԱՆ.

ԱԵԼԱՓԱՆ ԱՆՅԵՐՊԵՏԻ ԲԱՐԵՀԱԾ ԹՂԽՈՒՄՈՒԹԵԱՆ ԶԵՆՆԱՐԿԻՆՈՎ Ս. Էջմիածնի սրբազումար միարանութիւնից, բարեկրօն քահանաներից և բանասեր պարօններից ժողովել մի գումար, որով կարելի լինի կառուցանել թշուառ ժամանակների ողբերգակ Առաքել պատմագրի գերեզմանի վրայ մի վայելուչ դամբարան՝ խոնարհարար խնդրեմ հաճէք սոյն նպատակի համար մինչև այժմ ստացած գումարների հաշիւը զեւեղել Արարտի սիւնակներից մէկում:

	Թ.
ԱՉԳԻՍ ԱԵԼԱՓԱՆ ԱՆՅԵՐՊԵՏԻ	20
Գեր. Գրիգոր եպիս. Աղափիրեանից	5
Գեր. Սուրբիս Արքեպիսկոպոսից	10
Գեր. Ներսէս եպիսկոպոսից	5
Գեր. Գէորգ Արքեպիսկոպոս Սուրճնանից	10
Գեր. Սարգիս եպիսկոպոսից	5
Գեր. Գրիգոր եպիս. Գանակերեանից	1
Գեր. Մակար եպիսկոպոսից	5
Աթ. Ստեփան վարդ. Նսկնանդաւանից	1
Աթ. Գրիգոր վարդ. Տ. Ստեփաննոսեանից	1
Աթ. Համազասպ վարդապետից	7
Աթ. Յայիկ վարդ. Տ. Մովսեսեանից	10
Աթ. Թաղէոս վարդապետից	5
Աթ. Խաչիկ վարդ. Դատեանից	5
Բարեկ. Գէորգ ք. Գալստեանից (հանգ.)	5
Գ. Սիմէոն Հախումեանից	5

Ընդ ամենայն 94

Հանգանակութիւնը շարունակուում է, ցանցանկացողները թող բարեհաճեն ուղարկել իրենց նպաստները ս. Էջմիածին իմ հասցեով:

ԳՐԱԿԱՆ ՍՐԵՊՈՒՅԳ ԱՂԱՓԻՒՆԵԱՆ

Ռ Ո Ւ Ս Ա Հ Ա Յ Ք .

Հ Ա Մ Ա Խ Ի Ռ Յ Թ Ե Մ .

Համառոտ հաշուեցուցակ մտից եւ ելից Ս. Ստեփաննոս վանիցն Սաղիանու վանն 1895 ամի:

Առ 1-ն յունուարի 1895 ամի չէ մնացեալ վանքապատկան գումար ինչ, Ի 1895 ամի մտեալ են արդիւնք՝

Մ Ո Ւ Տ Ք

Ե Լ Ք .

թ.	Բ.	Պ.
1. Մասսահամրոյ ուխտաւորաց . . .	127	28 1/2
2. Ի գին 27 բեռն վանքապատկան գինւոյ 1894 ամի . . . . .	567	—
3. Ի գին 46 վեդրոյ և 4 կվարդ օղւոյ նոյն ամի . . . . .	185	—
4. Գանձանկադրամի ժողովեալ յեկեղեցիս քաղաքաց Շամսուոյ թեմի ի 1894 ամի . . . . .	58	53
5. Կապալավարձ վանքային Հոդոյն Գիւրջիւման գեղջ վանն 1893 և 1894 ամաց . . . . .	25	—
6. Ի վաճառմանէ դալար խոտոյ վանքային Հոդոյ . . . . .	9	—
7. Ի վաճառմանէ մորթոց մատաղաց . . . . .	13	—
8. Ի վաճառմանէ թարմ բանջարեղինաց . . . . .	2	15
9. Նուէր յատիճանաւորաց, քննողաց զհիւանդութիւն այգեաց . . . . .	8	—

թ.	Բ.	Պ.
1. Վանն երթևեկութեան ի Շամսիսի ի 1895 ամի տուեալ է կառավարձ . . . . .	30	13
2. Ի գին սերմանց բանջարեղինաց տրւեալ է . . . . .	3	25
3. Յաղագս օղեհանութեան եղեալ են մանր ծախք . . . . .	4	40
4. Վանն օղեհանութեան տուեալ է մաքս և հողահարկ յօգուտ գանձարանի . . . . .	91	16
5. Ի գին գնեալ չորից մեծ կարասաց . . . . .	60	—
6. Վանն ամենատեսակ մշակագործութեան այգւոյ վանուց . . . . .	112	4
7. Տուաւ բաժանորդագին Արարատայ 1895 ամի . . . . .	4	—
8. Տուաւ ի գին միոյ ձայնագրեալ ժամագրոյ . . . . .	8	—
9. Յընթացս ամրողջ տարւոյ ծախսեալ է ի պէտս ածխոյ, վառելիքայտի, իւրոյ, պանրի, բրնձի, մսի, լոբւոյ, աղի, օճառի, թէյի, շաքարի և այլն մի հարիւր երեսուն ըութի 98 կոպ. յորոց 82 ը. 40 կ. ծախսեալ է յընթացս երեք ամսոց ի ձեռն Իննիկ վարդապետի . . . . .	130	98

Ընդամէնն գումար արդեանց վանուց Սաղիանու յընթացս 1895 ամի է՝ ինն հարիւր իննսուն չորս ըութի իննըսուն վեց և կէս կոպէկ արծաթոյ . . . . . 994 96 1/2

Ի 1895 ամի յաւելեալ են ի վերայ գոյից վանիցն չորս խեցեղէն ամենամեծ տակաք, յորոց մեն մին պարունակէ հինգ բեռն գինի ծախիւք վանիցն:

Խաչկալ մի գեղեցիկ նուիրեալ ի բարեպաշտուհի Մարգարիտ տիկնոջէ Խաչատրեանց, Մի օրինակ Լամարարառոյ Ըստուածաշնչի նուիրեալ ի բարեպաշտ պ. Առաքելէ Ծատուրեանց, Աւթ հատ մետաքսեայ փոքր թաշկինակք աւետարանի, նուիրեալք ի զանազան բարեպաշտուհի անձանց, միամեայ Արարատ, միամեայ Արձագանք, միամեայ շնորհարար և միամեայ Վշակ:

Վանն շինութեան նորոգ ճանապարհի ս. Ստեփաննոս վանիցն Սաղիանու նուիրեալ են ի պ. Մկրտչէ Հաճկետանեանց հարիւր ըութի . . . . . 100 —

Վանն շինութեան պարսպի վանուցն՝		
ի պ. Գեորգայ Միրզաբէկեանց . . . . .	25	—
ի պ. Մկրտչէ Հաճկետանեանց . . . . .	25	—
ի պ. Եգորէ Սարուխանեանց . . . . .	6	—
ի պ. Յակոբայ Նիազեանց . . . . .	5	—
ի պ. Յակոբայ Աղաճեանց Արցախեցւոյ . . . . .	5	—

10. Յաղագս մասնաւոր կարկատանաց և դիւանական ծախուց . . . . .	9	28 1/2
11. Վճարեցան ի նախորդ ամի փոխարինեալ պարտքն . . . . .	357	80
12. Տուաւ նպաստ վանական դպրոցին 1895 ամի . . . . .	50	—
13. Տուաւ վարձ ծառայի . . . . .	8	33

Ընդ ամենն գումար ծախուց և ութ հարիւր վաթսուն ինն ըութի երեսուն եօթն կոպէկ . . . . . 869 37

Յետ հանելոյ զծախսն ի գումարէ մտից առ մէկն յունուարի 1896 ամի մնայ վանական գումար՝ մի հարիւր քըսան հինգ ըութ. յիսուն ինն և կէս կ. 125 59 1/2

Մակալ եպիսկոպ. Բարխուդարեան



Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Թ .

Ազգիս վեհապատ չայրապետը՝ ստանալով Կ. Պօլսոյ Պատրիարքարանից պաշտօնական հեռագրական զեկուցումս։ Ամեն. Տ. Մարաքիա Օրմանեան եպիսկոպոսի Կ. Պօլսոյ Պատրիարք ընտրուիլը եւ սուլթանի իրադէտով հաստատուիլը, քարեհաճեցաւ ամսոյս 27-ին ուղղել Եորին Ամենապատուութեան հետեւեալ շնորհատրական հեռագիրը.

Կ. ՊՕԼՍՍ

ՊԱՏՐԻԱՐԻՒՆ ԶԱՅՈՅ Տ. ՄԱՂԱՔԻՍ.

Ե ՊԵՍՏՎՈՊՈՍԻ ՕՐՄԱՆ ԵՆԱՆ.

Շնորհաւորելով զամբառնայն Ամենապատուութեան Ձերոյ յԱթոռ Պատրիարքական, առաքեմք առ Ձեզ զԱռաքելականն օրհնութիւն և աղաչեմք զԱստուած շնորհել Ձեզ կարողութիւն և զօրութիւն առ ի հոգուել ի խաղաղութեան զհօտն Ձեր, Ձերովն փորձ խոհականութեամբ և հեռատեսութեամբ:

Մ Կ Ր Տ Ի 2

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ԶԱՅՈՅ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ի Բ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿՈՏՈՐԱԾԻՆ.

(1896 ՅՈՒԼԻՍ 3)

(Շարունակութիւն)

Սոյն երկուշարթի և յաջորդ քանի մ' օրերը, յիշեալ բոլոր թաղերն ալ հիմն ի յատակ կործանուեցան։ Իսկ ինքեան և պրուեցան։ Սպանուողներէն յետոյ մնացեալ արու բնակիչք, կանայք և մանկունք, զանազան տեղեր ապաստանարան գտան, բայց գլխաւորապէս հետեւեալ տեղերը. Ս. Յակոբի թաղեցիք ի Խաչ—փողոց պարսկական հիւպատոսարանն, կուսակալ վսեմ. նազըմ փաշայի կուսակալութեան օգնական վսեմ. Ստեփան էֆենդիի, քաղաքապետական բժիշկ Ֆէթէկ պէյի, նահանգական տուժարակալի, Գոմինիկեան հարց և Համգի պէյի բնակարաններն, Վերջինս դէպքի միջոցին սպանուեցաւ ձեռամբ հաշակաւոր Շաքիրի և թեկաղութեամբ Թեմուր—զադէ Հայդար պէյի, Թօրօմանի թաղեցիք Ապաս աղա թիւրքի մ' և ճերմուկը զատէ հաճի Երևուֆ էֆենդիի տունը. Ապաս աղան միւս օրն իւր տունը ապաստանող արուները խուժանի ձեռք տալով սպանել, կիներն ալ արտաքսել տուաւ, որք դարձեալ հաճի Երևուֆ էֆենդիի տունը հիւրընկալուեցան և ապա անտի փոխադրուեցան Ամերիկեան Միսիօնարաց տունը, Հայկազան-

ցիք Ղալիպ փաշայի տունը, բայց երբ սա մարդիկ սպաննել տուաւ, կիներն և մանուկները փոխադրուեցան Առաջնորդարանը, Իսկ Կըր—Գարցիք Ամար աղա անուն թիւրքի մ' և ուսուսհագատակ հայազգի Կարսեանց տունը, ուր ուստական դրօշակ պարզուած և զինուորներով պաշտպանուած էր, իսկ աւելի շատերն ալ յաջողեցան փախչել կեդրոնական հայրենակ թաղերը, Ամար աղան ալ 2 օր յետոյ իր տունը ապաստանող 18 մարդիկ խուժանի ձեռք տալով սպաննել տուաւ, որոցմէ հազիւ 5-ն յաջողեցան փախչելով աղատուիլ, իսկ ընտանիքները նորէն Ամերիկեան Միսիօնարաց տունը փոխադրուեցան և կարգ մ' ալ Արարուց վարժարանն, որ այս առթիւ առժամանակեայ զօրանցի վերածուած լինելով, եկեղեցւոյն հետ աղատուեցաւ հրկիզ լինելէ, Զինուորական հրամանատար Ֆէրիզ Աեմսի փաշայն ազատեց Պէօլէնց փողոցը՝ թաղամասն ս. Յակոբի, ուր կը գտնուէր իւր բնակարանը. սոքա պատասպարուեցան իրենց տանց մէջը ցվեբը աղէտից:

Արարուց գիւղի և Աղրիւրի թաղերու բնակիչներն ալ տեսնելով որ վտանգը իրենց կը ձօտենայ, երկուշարթի օրը թողին իրենց տուները և ստացուած ընտանեօք կեդրոնական թաղերու մէջը ապաստանեցան, Յաջորդ երեքշարթի և չորեքշարթի օրերը թիւրք խուժանը մտաւ ասոնց տուններն ալ և կողպտելէ յետոյ, մեծաւ մասամբ հրդեհեց, սպաննելով տակաւին տանց մէջը մնալու յանդնութիւն ունեցողներ և դանդաղկոտ ծերունիները, Վերջիշեալ Հայկազանքի ս. Յակոբի, Կըր—Գարի, Արարուց գիւղի և աղբիւրի ինչպէս նաև Յայնկոյսների թաղամասերէն Ասոի դարի և Ան փողոցի, մէկ խօսքով բոլոր թրքախառն և թրքապատ թաղերու բնակիչք խել մ' անգամ չը կրցան վերցնել իրենց տնական ապրանքներէն, ամէնն ալ կողոպտուեցան կամ այրեցան, իրենց տանց զաններն և փայտեղէն կամ երկաթեղէն շինուած նիւթերն, մինչև իսկ անասնոց թրիքն անգամ թիւրքերու տունները փոխադրուեցան, Իսկ այգիներն ալ այսօր արօտատեղի դարձած են նոցա անասնոց:

Այսօր թիւրք խուժանը Հայկազանքը կոտորելէ յետոյ, խուժեց նաև ի Բաղաքամէջ. ճամբու վրայ պատահած հայերը սպաննելէ յետոյ, յարձակեցաւ նաև հայոց տուններու վրայ, սակայն թրքախառն թաղերու մէջը միայն յաջողեցաւ տուներ կողոպտել և մարդիկ սպանել, իսկ կեդրոնական թաղերու և շուկայի վրայ յարձակած ժամանակը զինուորական չեքքէզ հազարապետ Էմին պէյի կողմէն յետս մղուեցաւ, Անցեալ աշնանէ ի վեր կուսակալութեան կողմէն սոյն անձին յանձնուած էր շուկայի պահպանութիւնն, Յօրէ անտի սա աշաւրջութեամբ հսկեց, իւր պաշտօնին նուիրուեցաւ անձնուիրութեամբ և այժմ որ Բաղաքամէջն և շուկայն բաղդատարար ազատ մնացին ծանրագոյն

\* Տես Արարատ համար Ժ. Եր. 475:

արկածներէ, կը պարտինք նորա կորովամիտ ուղղութեան: Այսու ամենայնիւ և հակառակ նորա կամանց թէ Քաղաքամիջի շուկայն և թէ Արարուց, Խաչ փողոցի, Նորաշէնի և այլն շուկաները յայտնի և գաղտնի կերպով մեծապէս վնասուեցան:

Աղէան սկսած ժամանակը դպրոցներու աշակերտք և աշակերտուհիք փակուեցան դպրոցներու և եկեղեցեաց մէջը: Մայրերն դառնապէս կարտասուէին, կարծելով որ դպրոցները վտանգի անմիջական վնասներուն մերձ գտնուելով, աշակերտք զոհ պիտի երթան խուժանի կատաղութեան, սակայն բարեբաղտաբար բացի ս. Յակոբ եկեղեցիէն, որոյ դպրոցը նոյն օրը փակ էր, առաջին օրը դպրոցներու և միւս եկեղեցեաց վրայ յարձակում տեղի չունենալով, աշակերտք և աշակերտուհիք փոխադրուեցան կեդրոնական հայասնակ թաղերն:

Այս և յաջորդ առուրց մէջը խուժանը յարձակեցաւ նաև Հայկազանքի ս. Յակոբի և Յայնկոյսների եկեղեցեաց և դպրոցներու վրայ, զորս կողոպտելէ, խաչկալներ, պատկերներ և այլն սրբութիւններ խորտակելէ յետոյ, հրկիզեց, Հայկազանքի և ս. Յակոբի եկեղեցեաց մէջը սպանելով նոցա շոյս քահանայներ և ժողովրդէն ալ կարևոր թուով անձերն, որք կոտորածէն զերծ մնալու յոյսով ապաստանած էին եկեղեցեաց մէջը:

Երեկոյեան հրացանի ձայները դադրեցան և խուժանը քաշուեցաւ: Կարծեցինք որ երկուշարթի օրուան սպանութիւնք և աւերմուք բաւական համարուելով, կառավարութիւն զօրաւոր միջամտութեամբ վերջ տուած էր կամ պիտի տար խուժանի յարձակմանց, սակայն որչափ կը սխալուէինք:

Երկուշարթի (յունիս 4) արևազային՝ մահմեդական խուժանը կրկին և աւելի սաստիկ հրացանաձգութեամբ յարձակեցաւ կեդրոնական հայասնակ թաղերու վրայ, Արարուց կողմը՝ Չալի փողոցի գլխէն՝ զարնելով Խիւթիւնձեան եղբարց տունը, Այնտիկն առաջին անգամ լինելով խուժանը պատահեցաւ հայոց կողմէն ընդդիմադիր անձնապաշտպանութեան, Հայոց գնդակներն պատասխանեցին խուժանի արձակած զնդակներուն և յետ մղեցին խուժանը: Յարձակման կէտը փոխելով խուժանն աւելի մեծ ոյժով, զարձեալ Արարուց կողմը, Նախրի փողոցի գլխէն փորձեց հայոց թաղերու մէջը մտնել, բայց հոն ալ ընդդիմադրութեան բաղխելով, յետս մղուեցաւ: Նոյնպիսի ընդդիմադրութեան պատահեցան նաև Յայնկոյսների գետի կողմէն հայոց թաղերու վրայ եղած յարձակմունք և յետս մղուեցան: Այն օրը մինչ երեկոյեան խուժանն անդադար յարձակումներ գործեց յիշեալ երեք կէտերէն փոփոխակի այս ու այն կէտերու վրայ, սակայն ամենուտեք ալ յետս մղուեցան կորուստներով:

Այն օրը Արարուց վանուց վանահայր և Աղբատանամ յանձնաժողովոյ նախագահ Կեր. Գա-

նիէլ վարդապետը, զարմանալի անձնապատանուութեամբ Այգեստանէն ձիով ձամբայ կելնէ քաղաք Առաջնորդարանն իջնելու մտօք: Սակայն քաղաքի պողոտային վրայ, կուսակալութեան հայազգի օգնականի տան մերձ գտնուած զինուորական պահականոցի առաջը, զինուորներէն և խուժանէն յարձակում կրելով, ձիէն վար կը քաշուի և սպանուելով դիակն կը ձգուի մերձակայ արտի մ' մէջը, ուր շները կը կրծեն զայն, Քանի մ' օր յետոյ միայն անձանաչելի կրճոտեալ դիակ մ' կը յանձնուի մեզ, զոր կը թաղեմք:

Խուժանի յարձակումներն միշտ աւելի սաստկութեամբ և միշտ ալ խառն զինուորներով և սուտիկաններով, յաջորդ չորեքշարթի և հինգշարթի (Յունիս 5-6) օրերն ալ շարունակուեցան, բայց միշտ ալ յաջողութեամբ յետս մղուեցան: Կորուստներ պատահած ժամանակը, խուժանի հետ խառն գտնուած զինուորք, որոնք զինուորական փողեր կը կրէին, օգնութիւն կը խնդրէին փողերով: Այս օրերու մէջը հրացանաձգութիւնք շարունակուեցան նաև գիշերները, հայ ինքնապաշտպաններ և ժողովուրդը յոգնեցնելու և անհանգիստ ընելու համար:

Այն երեք առուրց միջոցին տեղի ունեցած անդադար յարձակմանց պատճառաւ, կեդրոնական թաղերու հայ բնակիչք ալ սկսան տակաւ քաշուել աւելի կեդրոնական թաղերու և մասնաւորապէս ռուսական և պարսկական հիւպատոսարաններու և անոնց կից ու դրօշակներու ներքև առնուած տուներու մէջը: Իսկ գլխաւորապէս Անգլիական դրօշի պաշտպանութեան ներքև առնուած Ամերիկեան միսիօնարաց տունը, Չը մոռանաք ըսել որ դէպքը պատահելէն մինչև վերջը Անգլիական հիւպատոսն և Ամերիկեան միսիօնարք անձամբ և հրաւիրակներով հայոց թաղերը շրջեցան և ժողովուրդը հրաւիրեցին Անգլ. դրօշի պաշտպանութեան ներքոյ:

Սակայն հինգշարթի օրն՝ գործերը նոր երևոյթ մը ստացան: Անգլիական վեմը, հիւպատոսն խաղաղութիւնը վերահաստատելու բաղձանքով և եռանդեամբ, կուզէ տեսնուել հայ անձնապաշտպաններու ներկայացուցիչներուն հետ և կայսեր. կառավարութեան առաջարկելու համար բանակցութեան հիմ մը յառաջ բերել նոցա հետ: Տեսակցութիւնն կը կարգադրուի յաջորդ ուրբաթ օրուան համար:

Նոյն օրը (յունիս 7) խուժանի յարձակմունք և հրացանաձգութիւնք կը դադարեն: Առաւօտեան Անգլիական հիւպատոսն քաղաք կիջնէ և զՓոխախորհրդ հայրն իւր կողքի մէջն առնելով Այգեստան կը փոխադրէ, յայտնելով որ իրենց պաշտօնն է տեսնուիլ հայոց անձնապաշտպան խուժարերու ներկայացուցիչներուն հետ և զանոնք անձնատուութեան հրաւիրելով վերջ տալ աղէտից:

Նոյն օրը ժամը 4-ին Անգլ. հիւպատոսի և Ամերիկեան միսիօնար Տզբթ. Մէյնօլդսի հետ կը տեսնուին անոնց երեք ներկայացուցիչներուն հետ, Անգլ. վսեմ: հիւպատոսը կը յայտնէ անոնց կայսեր. քննիչ վսեմ: Սաէզզին փաշայի հետեւեալ նրկատողութիւնները. Յունիս 3—6 հայոց ամբացած զիրքերու վերայէն բազմաթիւ գնդակներ տեղացած լինելուն համար կը հետևի թէ հայոց մէջը զինուորական կարևոր ոյժ մը կայ, թէ երբ ինքը թիւթիւնճեանց տունը լուր կը զրկէ, որ եթէ նոքա հրաժարեն գնդակահարութիւններէ, ինքն պատրաստ է 4 հատ զօրք դնել անոնց տան մէջը խուժանի յարձակումները վանելու համար, անոնք մերժած և պատասխանած են որ վեհ. սուլթանի շնորհիւ մենք կարող ենք ինքզինքնիս պաշտպանել, զուք միայն խուժանի յարձակումները արգելելու շնորհ ըրէք: և թէ հայերը Նոյն իսկ իր վրայ ալ գնդակ արձակած են, Այս և ուրիշ նկատողութիւններով Սաէզզին փաշայն հաւատացած է, որ անձնապաշտպան խուժարու մէջը կան զինեալ օտարահրկատակ անձեր և թէ հայոց անձնապաշտպանութեան ցոյցերը կը համարի պարզ ապստամբական շարժումներ, զորս զինու. զօրութեամբ պարտաւոր է նուաճել:

Վայսեր. քննիչի յիշեալ նկատողութիւնները հաղորդելէ յետոյ վսեմ: հիւպատոսը, յանուն վեց մեծ տէրութեանց, կառաջարկէ հետեւեալ պայմաններն, որք եթէ հայոց կողմէն ընդունուին, պիտի առաջարկէ զանոնք Վ. Պօլսոյ Անգլ. դեսպանութեան միջոցաւ օսմ: կայս. կառավարութեան, զորս կը յուսայ ընդունել տալով վերջ տալ կոտորածին և խռովութեան, կառավարութեան ընտրած 10 անձանց և հայոց բռնած գիրքերէն թիւթիւնճեանց տան և Յայնկոյններու զիրքերու գտնուած զէնքերով, յանձնուած հիւպատոսարանաց միջոցաւ կայսեր. կառավարութեան, յորմէ յետոյ յիշեալ 10 անձինք Անգլիական կառավարութեան երաշխաւորութեամբ և պէտք եղած զինուորական ապահովութեամբ օսմ: երկրէն հեռացուելով իրենց ուզած ո և է Եւրոպական նաւահանգիստ մը պիտի յանձնուին, Եւ կը յաւելու յայտնել, որ եթէ չը հաւանին ոչոյ պայմաններուն, կառավարութիւն պիտի ձեռնարկէ զօրաւոր ոյժով նուաճել հայ ապստամբական խուժան և թէ ի հարկին պիտի ոմբակոծուի քաղաքն:

Հայ ինքնապաշտպան ներկայացուցիչք կը պատասխանեն, թէ մենք ապստամբներ չենք, այլ ինքնապաշտպաններ և ինքզինքնիս կը պաշտպանենք խլամական մոլեռանգ խուժանի յարձակմանց ընդդէմ: Կը յաւելուն թէ՛ երկուշարթի օրը մենք չը դիմեցինք ինքնապաշտպանութեան, հաւատալով որ տեղական կառավարութիւն պիտի միջամտէ և վերջ տայ խուժանի յարձակմանց, սակայն երբ տեսանք որ արիւնհեղութիւնք, հրկիզութիւնք և աւարա-

ուութիւնք անարգել կը յառաջանան և մեզ ալ վիճակակից պիտի ընեն Հայկավանքի, Վլոր—Գարի և ս. Յակոբի դժբաղդ ժողովրդեան, դէպք պատահելէն 20 ժամ յետոյ միայն զէնք վեր առինք անձի պաշտպանութեան համար, Մենք օսմ: զինուորի վրայ գնդակ չենք արձակեր, այլ միայն անոնց վրայ, որք մեր վրայ կը գան բռնարարելու մեր անձ, տուն, պատիւ և ստացուածք և թէ բոլորովին սխալ է Պերիզ Սաէզզին փաշայի վրայ գնդակ արձակած ըլլալու զրոյցն, Իսկ անձնատուութեան գաղով կը յայտնեն որ պատրաստ են ի շահ երկրի խաղաղութեան, և անմիջ արիւնհեղութեանց ու աշխարհաքանդ աւերմանց առաջքը առնելու համար համակերպիլ առաջարկեալ պայմաններուն, եթէ վստահ լինին որ պիտի յարգուին անոնք և թէ առայդ աւելի վստահ լինելու համար, կառաջարկեն որ բանակցութեան ներկայ գտնուին նաև պարսկական հիւպատոսն և ռուսական հիւպատոսարանի թարգմանն՝ պ. կարապետ Զիլինկարեան, Ի դէպէս յիշել, որ ռուսական հիւպատոսը դէպքէն 10 օր առաջ քաղաքէս մեկնած լինելով ի Թիֆլիզ, քացակայ կը գտնուէր այն ժամանակը, սակայն Թիֆլիզ հասնելէ յետոյ լսելով դէպքը, անմիջապէս անտի մեկնած էր ի Վան, ուր հասաւ յունիսի 16-ին:

Անգլ. հիւպատոսն կընդունի նոցա սոյն առաջարկութիւնը և քիչ յետոյ, երեք կառավարութեանց ներկայացուցիչներով միասին, կը տեսակցին հայ ներկայացուցիչներուն հետ, Սոյն տեսակցութեան միջոցին անձնատուութեան պայմաններն հետեւեալ կերպով կը ճշգրտին: 60 զինեալ անձանց իրենց զէնքերով անձնատուութիւն և յանձնումն երեք հիւպատոսարաններուն, որոց մի փոքր մասն նշանակեալ երաշխաւորութեամբ և ապահովութեամբ օսմ: երկրէն պիտի հեռացուցուին ո և է Եւրոպական նաւահանգիստ մը, իսկ մեծ մասին, զարձեալ Նոյն տէրութեանց դեսպաններու միջնորդութեամբ, Վայսեր, ներողութիւն լինելով, ազատ պիտի թողուին, Իսկ թիւրք և քիւրդ շարագործներէն ալ 60 անձինք երկրէն արտաքսուելով, երկիրը պիտի խաղաղացուցուի և բարենորոգուի:

Վերոյիշեալ պայմաններն երկուստեք ընդունուելով, Անգլիական հիւպատոսն կը մեկնի զանոնք ի Վ. Պօլսո իւր՝ դեսպանին հետադրելու համար, իսկ Փոխանորդ հայրն ալ մեկնելով, Անգլիական զրօշի պաշտպանութեան ներքև գտնուող 20000-էն աւելի հայ ժողովրդեան կաւետէ մտալուտ խաղաղութեան նշանները, Սակայն որչափ խաբուած էինք . . . . .

Նոյն աւուր երեկոյեան, բանակցութիւնէն հաջիւ 4—5 ժամ յետոյ, ժամ 1—2-էն սկսեալ, Այգեւստանի հիւսիսակողմը, Յայնկոյնների կողմէն, կանոնաւոր և անընդհատ հրացանաձգութեանց ձայն

ներ կը լսուին: Ահաբեկեալ ժողովուրդը կը շուարի, կը զարհուրի արգօք մահմեդական խուժանը գիշերն ալ սկսեց իւր յարձակումները, ո՛ր է աւետեալ խաղաղութիւնն: Բայց այս հերիք չէր գեռ:

Հարաթ (յունիս 8) առաւօտեան ժամ 9-էն սկսեալ, հրացանաձուլութեանց հետ խառն, լեռնային հինգ թնդանօթներ, որք գիշերանց Յայնկոյսներ ըլլուրին վրայ զետեղուած էին, կսկսն ուժակոծել քաղաքը, շակտակ Անգլիական հիւպատոսի ըրած խոստման և առաջարկած պայմաններուն կառավարութիւն զինուորական ոյժով և թնդանօթներով սկսած էր զարնել Յայնկոյսների թաղի տունները, յորոց ոմանց մէջը հայ անձնապաշտպանք ամրացած էին: Անհնարին է նկարագրել ժողովրդեան ահաբեկում և խուճապը: Ծակաւին տանց մէջը մնացեալ հայ ժողովուրդն ալ սարսափահար կը թողու իւր տուն ու տեղը և կապաստանի օտար դրօշակներու պաշտպանութեան ներքև:

Ռմախոճութիւնը հետզհետէ կը կործանէ հայոց ամրացած տուններն և կը պարտաւորէ զանոնք նահանջելով: աւելի կեղբոնական թաղերու մէջը շարունակելու ընդդիմադրութիւնը, որովհետև զօրաց հետ խառը կեցած է նաև համիդէի հեծելազունքն, իսկ ետևը կեցած է կատաղի խուժանըն, որոց մուտքը հայոց թաղերու մէջը դժուարացնելու համար, անձնապաշտպանք կը ձեռնարկեն գետին տապալել փողոցներու ուռնի և ըն հաստարմատ ծառերը:

Թնդանօթները ըլլուրէն վար իջուցուելով, ուղղակի հայոց թաղերու մէջը կը զետեղուին և հայոց տունները՝ հազիւ 100 քայլ հեռաւորութեան վրայէն կը ուժակոծուին: Անոնաւոր պատերազմն և ուժակոծութիւն տեւելով մինչև նոյն օրուան ժամ 10-ն, կը ջատկախէ հայոց ընդդիմադրական ամէն ոյժը: կը կործանէ բոլոր այն տունները, ուր հայերը հետզհետէ ամրացած էին և վերջ ի վերջոյ կը պարտաւորէ զինուորեալ 200-ի չափ հայերն, իրենց զէնքերով դուրս ելնել քաղաքէն և գիմել դէպի պարսկական սահմանադուին: Ասոնց կը հեռակին նաև 1000-էն աւելի անգէն մարդիկ ալ, որք կոտորածէն ազատ մնալու համար կը փախչին քաղաքէն: օտար հողի վրայ ապաստանարան փնտռելու համար, Հայոց թաղերու վրայ կը բերուին նաև Գրուսի թնդանօթներն, սակայն անոնց գործածութեան պէտք չը տեսնուիր: նոյնպէս երկու լեռնային թնդանօթներ ալ կը դրուին Արարուց վարժարանին մէջը, որք նոյնպէս չեն գործածուիր:

Չորեքշաբթի օրէն սկսեալ արգէն սկսած էին հետզհետէ քաղաք հասնել բոլոր շրջակայ քիւրդ աշիրաթներէն Վան բերուած հազարաւոր համիտիներն և գիւղերէն ու գաւառներէն հասած թիւրքեր և քիւրդեր, որք առջի օրերու խուժանի թուոյն վրայ աւելցած են, որոց թիւն այժմ կը հասնի իբր 15000-ի: Ասոնք նոյն շաբաթ և

յաջորդ կիւրակէ և երկուշաբթի օրերն, անարգել կը մտնեն հայոց կեղբոնական թաղերու մէջը, կը հրկիզեն, բոլոր երկյարկ և եռայարկ գեղեցիկ շէնքերը և ամէնն ալ առհասարակ կը կողոպտեն սպանելով նաև տուններու կամ այգիներու մէջը տեսնուած հայերը: Իսկ Յայնկոյսների թաղն, ուր ուժակոծութիւն տեղի ունեցած էր, նոյնպէս ալ Խիւթիւնձեանց տան և մերձակայ Չալղի փողոցներն, ուր հայք ընդերկար շարունակած էին ընդդիմադրութիւնը: Փերիզ Սաէդգին փաշայի և զինուորական հազարապետ Հաշիմ էֆենդիի հրամանաւ, պարզ մոխրակոյտի մ' վերածուեցաւ: Վերջինս ուղղակի կառաջնորդէր խուժանի բոլոր հրկիզութեանց և աւարառութեանց:

Ինչպէս վիճակացոյցէն պիտի երևի, հրկիզեալ տանց, եկեղեցեաց և դպրոցաց թիւն, միայն քաղաքի մէջը կը հասնի իբր 500-ի: հրկիզութեանց ամենէն նշանաւոր օրն է կիւրակէ (9 յունիս): Արեգական լոյսն կաղօտանար հրդեհուած տանց ծուխէն, իսկ գիշերներն կը լուսաւորուին անոնց մինչև երկինքը բարձրացած բոցէն:

Այսօր ֆրանսական կառավարութիւնն քաղաքիս Գոմինիկեան հայրերէն Իէռնեթիֆրանսը, հեռագրաւ և ցնոր տնօրինութիւն, կանուանէ ներկայացուցիչ ֆրանսական կառավարութեան ի Վան և անկէ տեղեկութիւն կը պահանջէ քաղաքիս արկածին վրայ: Իսկ քանի մ' օր յետոյ ալ՝ ցանուանուած յաջորդին՝ կանուանէ զայն ֆրանսական հիւպատոս ի Վան, ուր ֆրանսական կառավարութիւնը կը հաստատէ նոր հիւպատոսութիւն մը: Եթէ դէպքի սկզբնաւորութեան ժամանակը այս հիւպատոսութիւն հաստատուած ըլլար, ս. Յակոբի թաղը կազատուէր:

Խուժանի յարձակումը և աւարառութիւնը շարունակուելով երկուշաբթի օրն ալ (յունիս 10) հասան մինչ նորաշէնի եկեղեցին, հայոց ամենէն կեղբոնական թաղը, հազիւ 50 քայլ հեռաւորութեամբ Անգլիական հիւպատոսարանէն, որոյ թաղին վրայ ալ յարձակումն կսպառնար, Էրպատոսն, օսմ: զխարկ դրած, հիւպատոսարանի տանիքը ելաւ և հոն պատնէջ զետեղելով, հրացանաձուլութեամբ վանեց յարձակումը: Այս յարձակումն ամենէն վերջինն էր: Ազգային յարձակումէ և աւարառութեան ազատ մնացին միայն Գաղաքամիջի կեղբոնական թաղերն, իսկ Այգեստանի թաղերէն ալ Արարուց թաղի արևելեան և նորաշէնի արևմտեան մասերն, նաև Այգեստանի արևելակողմը՝ նորատունկներու մի մասն: Ասոնց գումարը կը հասնի իբր 1000 տանց, մինչ կողոպտեալ և այրեալները 2000-էն կանցնին: Միակ հարստութիւնն՝ զոր այսօր ունին հայք ի քաղաքիս, սոյն 1000 տանց և շուկայներէն կիսովին ազատուած հարստութիւնն է միայն:

Նոյն երկուշաբթի օրը Փերիզ Սաէդգին փա-

չան կը պահանջէ խուզարկութիւն ընել Տիւլպատոսարաններու գրօշին ներքեւ ապաստանող հայ ժողովրդեան մէջը՝ զանոնք զինաթափ ընելու համար։ Պարսկական հիւլպատոսն և ուսական թարգմանը կը մերժեն, իսկ Անգլիական հիւլպատոսը կը հաւանի։ Այս առթիւ կը կասկածուի որ մահմադական խուժանը յարձակի Ամերիկեան միսիօնարաց տան վրայ, ուր հաւաքուած են 2000-էն աւելի հայեր և ուր փոխադրած են հայք, ինչ որ կըրցած են ազատել իրենց տնական կարասիներէն և ուսեստէն։ Ապա՝ ու եւ պատճառաւ խուզարկութիւն չը կրննր։

Նոյն առաւօտեան Անգլիական վեսմ. հիւլպատոսն և Ամերիկեան միսիօնարք՝ քանի մ' բողոքական հայոց գործակցութեամբ, կը ձեռնարկեն զինուորական բռնի ոյժով միսիօնարաց տան մէջէն և Անգլ. գրօշի պաշտպանութենէն արտաքսել բոլոր շափահաս արուները՝ 15—60 տարեկան, որք նոյն իսկ իրենց հրաւիրմամբ նոյն գրօշին պաշտպանութեան ներքեւ ապաստանած էին։ Գրիչը կարող չէ նկարագրել այն սոսկալի արհաւիրքը, լաց ու կոծը, որք ու աղաղակը, որք կսկիւն ժողովրդեան մէջը, Կիններն ու տղաները կը կոծեն ու կողբան, կարծելով որ իրենց այրերն ու հայրերն դուրս կը հանուին խուժանի կատաղութեան ենթարկելու համար, շատերը՝ մինչև իսկ վերջին հրաժեշտը տալով իրենց ընտանեացի կը հեռանան։

Արտաքսեալ ժողովուրդն՝ ահաբեկեալ և հեռուորութեան պատճառաւ միւս հիւլպատոսարաններն ապաստանելու անկարող, կը փորձէ ապաստանարան փնտռել լեռներու, խոտերու, ցորեանի արտերու, աղբիւրի հորերու և ականներու և այլն տեղերը, Իսկ շատեր ալ կերթան միանալու շաքաթ օրն քաղաքէն մեկնող խուժինն և անոնց ընկերակցութեամբ գիմել պարսկական սահմանազուխը։ Սակայն ճամբայները քիւրդ Աշերաթներով բռնուած կրնելով, թէ լեռը ապաստանողներէն և թէ պարսկական սահմանազուխը գիմողներէն բազմաթիւ անձինք կսպանուին, Բաղդաստել Անգլ. հիւլպատոսի և Ալալիպ փաշայի վարմունքը... Կը կարծուի թէ Անգլ. հիւլպատոսի սոյն բիրտ վարմանց շարժառիթն էր ահաբեկացնել հայերը և պարտաւորեցնել ստորագրելու հետեւեալ ուղերձը։

Նոյն երկուշաբթի օրն Անգլիական հիւլպատոսի և Ամերիկեան միսիօնարաց առաջարկութեամբ և ստիպանքով քանի մ' հայ երևելեաց կողմէն կոտորագրուի մի ուղերձ, ուղղեալ առ կայսեր, քննիչ Ֆերիզ Սաէդդին փաշայն, որ դէպքի միջոցին նշանակուած է նաև կուսակալի փոխանորդ, փոխանակ նազրմ փաշայի որոյ դէպքի միջոցին կրկնած հրաժարականն ընդունուած է։ Սորա մէջը կրկնելով հայոց դարաւոր հաւատարմական զգացումներն առ սմ։ գահն, կը յայտնուի զինուորեալ հայերու

քաղաքէս մեկնումը և կը խնդրուի, խնայելով անմեղ և անզեն ժողովրդեան կենաց, գոյից և ստացուածոց, վերջ տալ կոտորածին, աւարառութեան և հրկիզութեան, զինուորական ոյժով վերահաստատելով խաղաղութիւն և անդորրութիւն։

Երեկոյեան ժամ 10-ին լուր կը բերուի վեսմ. հիւլպատոսին՝ որ վեհ. սուլթանը բարեհաճած է ներել ժողովրդեան և հրամայած, որ շուտով երկրի մէջ վերահաստատուին խաղաղութիւն և անդորրութիւն։ Աւեմ. հիւլպատոսը սոյն աւետիսը Պոս. Էօր միջոցաւ ծանուցանելով ժողովրդեան, կը հրաւիրէ որ ամէն մարդիկ, որոց տուններն այրուած չեն, շուտով քաշուին իրենց տունները և անոնք՝ որոց տուններն այրուած են, բարեկամաց և դրացեաց տունները պատսպարուին։

Նոյն օրուան երեկոյին և յաջորդ քանի մ' օրերու մէջն՝ Անգլ. պաշտպանութեան գիմող հայերն, հիւլպատոսի և միսիօնարաց ստիպմամբ, կը քաշուեն իրենց բնակարաններն, իսկ տուն չունեցողներն ալ հայոց անվնաս մնացեալ թաղերն, և հաղարաւորներ ալ, զխաւարապէս զհիւլպայիններն, փողոցներու մէջը կը մնան, նորաչէն եկեղեցին, դպրոցն, որպէս նաև Սանդխտեան և Գայեանեան վարժարաններն ալ ապաստանարան կը գտնան զըժբաղդ արկածելոց, Իսկ ուսական և պարսկական հիւլպատոսարաններն ապաստանողներն մինչև 8—10 օր ալ պատսպարուած կը մնան անդ և ապա կը վերադառնան, Հատ մըր տուն չունեցողներն և այլք մինչև օրս իսկ ապաստանած կը մնան նոյն հիւլպատոսարաններու կից տուններուն մէջը։ Հետզհետէ կը հասնին նաև լեռը և լէն տեղերն ապաստանող հայերն, յորոց ոմանք կը ձերբակալուին իբր ընկեր փախըտականաց և մեծագոյն մասը կարձակուին յետքննութեան։

Միայն քաղաքի մէջը, կոտորածի թիւն կը հասնի իբր 700-ի, Ինչպէս կը տեսնուի, սոյն թիւն աննշան է բաղդատմամբ գիւղերու և գաւառներու կոտորածին, որ կը հասնի 15—20000-ի թուոյն, Ինչպէս տեղեկագրէս երեցաւ և պիտի երևի մեր շրկելիք վիճակացոյցէն, քաղաքի սպանելոց ամենամեծ մասն Լալիպանքի, ս. Յակոբի, Կլոր—Գարի և այլն թըքախառն և թըքապատ թաղերու բընակիչներն են և երկուշաբթի օրուան կոտորածին մէջը սպաննուած, նոյն օրէն յետոյ և կեդրոնական թաղերու մէջը սպանելոց թիւն աննշան է։

Սոյն զարմանալի երեկոյթներու պատճառն է միմիայն Այդեատանի կեդրոնական թաղերու մէջը տեսնուած ընդդիմադրութիւնն, որ 5 օր տևելով արգելեց խուժանի մուտքը նոյն թաղերու մէջն և միջոց տուաւ ժողովրդեան ապաստանալայր գտնել հիւլպատոսարաններն և այլն տեղեր, ապրանք և ուտեստ ալ կարելի եղածին շափ ազատելով, Իէէն ընդդիմադրութիւնը նուաճուելէ յետոյ, աւելի կա-

տաղի և բաղմամբի խուժանն այդ թաղերու մէջն ալ խուժեց, սակայն իր առաջը թափուր տուներ և անպաշտպան ապրանքներ միայն գտաւ, մարդիկ քաշուած էին, եթէ չը լինէր ընդդիմադրութիւնն, երբէք տարակոյս չը կայ որ բոլոր Վանայ ժողովուրդը յուեզոյն կերպով վիճակակից պիտի լինէր Հայկազմաքի և գիւղերու ու գաւառներու ժողովրդեան:

Խուժանն և կռաւարութիւնը դիակներու հետ ալ խիստ անգթաբար վարուեցան, Բացի Հայկազմաքէն ուր 100-ի չափ դիակներ միայն թաղել տրուեցան միւս դիակներն գրեթէ ամբողջովին և օրերով անթաղ մնացին տուններու, այգիներու, գաշտերու և փողոցներու մէջը, կեր լինելով շներու և թըռչուններու, Բազմամբի դիակներ ալ թիւրքերու միջոցաւ լեցուած են հայ տանց ջրհորներուն մէջը, յորս կը մնան ցարդ, հայոց խմած ջուրն ալ ապականելու և անխմելի ընելու դիտաւորութեամբ:

Երկուշաբթի երեկոյեան, խաղաղութեան վերահաստատման հրատարակութենէն յետոյ, տեսանք Վարագի. ս. Խաչի և Կարմրաւորի վանուց, Հուշանց և այլն գիւղերու հրդեհներու մինչ երկինքը բարձրացող ծուխերը որոնք հրդեհուած էին հայ անձնապաշտպան փախստականներուն հետապնդելու պաշտով քաղաքէն վերադարձուցուած համիդիէներու կողմէն: Միւսնոյն ժամանակ հասաւ նաև Արձակ բազմահայ գիւղի կոտորածէն փախող այրիացած և որբացած հարիւրաւոր կին և տղայներն, բոկոտն, տկող, հերարձակ և փոշելից, ոմն աւաղելով իւր այրը ուրիշ մը իւր եղբայրը մին ողբալով իւր հայրը միւսն իւր ազգականը . . . : Ասոնց ընծայած աղիւզորժ տեսարանը մեր գրիչը կը դժուարնայ նկարագրելու: Հն որ հիւ վեհ. Ս ու լ թ ա ն ի ն խաղաղութիւն վերահաստատուած է:



ՊԵՏՏՈՆԱԿԱՆՔ:

ՔԱՂՈՒԱՅՔ Ի ԿՈՆԴՍՏԱՆՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ:

Կոնստանտինոպոլի Գրիգորի Այվազեանց Բազուեցոյ վասն նուիրանաց նորա յօգուտ եկեղեցոյն Սարուշէն գեղջ՝ այր ուսումնարանին կարգեցաւ պատուաւոր խնամակալ. թ. 1430:

— Ծանուն Գարրիէլ քահանայի Բակըրեան Աստրախան քաղաքի որով շնորհեցան նմա իրաւունք կամիլաւայի ըստ միջնորդութեան Գեր. թեմակալի միճակին Տ. Արիստակէս Արքեպիսկոպոսի. թ. 1431:

— Ծանուն սինօղի ս. Էջմիածնի որով պատուիրեցաւ տալ զմնացեալ գուժարն հանդ. Աղուանեան եպիսկոպոսի Տ. Գիւտ քահանայի Աղանեան զի վճարեցէ զմնացեալ զինս նորոգ զնեալ մեքենայից Տպարանի Մայր Աթոռոյ և վասն ճանապարհածախուց նոյն. թ. 1433:

— Ծանուն Սինօղի որով պատուիրի զընդ ի տուժար ելեւմտից Մայր Աթոռոյ զ 4000 ռուբլիան, առաքեալս ի խորհրդոյ եկեղեցեաց Ս. Պետրբուրգի վասն պահելոյ զ 20 որդեկիրս ի Ճեմարանի իսկ 1000 ռուբլի պահել յաւանդ վասն ուսումնաւարտ սանուց, որք ունին հրահանգիլ ի բարձրագոյն կրթութիւնըս. թ. 1434:

— Օրհնութեան յանուն տիկին Շողակաթի Մելիքեան Բազուեցոյ վասն նուիրելոյ նորա 14000 ռուբլիս 12000 յանուն Ճեմարանի և 2000 ի տրամադրութիւն Շորին Սրբութեան. թ. 1435:


— Ծանուն Առաջն. Տեղապահին Ատրպատականի Տ. Յովսէփ վարդապետի Սարաջեան լինել հրահանգ վասն խորհրդոյ պատկի. թ. 1436:

— Օրհնութեան յանուն պ. Համբարձումայ Մելիքեան Բազուեցոյ. թ. 1444:

— Ծանուն Ժողովրդեան Բազու քաղաքի վասն ընտրութեան քահանայից. թ. 1445:

— Ծանուն Տ. Գիւտ քահանայի Աղանեան որով պատուիրի ստանալ հետգհետէ ըզնորոգ զնեալ մեքենայս տպարանի Մ. Աթոռոյ և հասուցանել ի Ս. Էջմիածին. թ. 1448:

— Օրհնութեան յանուն պ. Աղեքսանդրի Մանթաշեանց ի Տփլիս. թ. 1462:



ՈՒՍՈՒՄԵԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐՁ. ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎ:

Մ ո լ ծ ե ա լ ե ն ի ց ու լ ջ ա կ ու լ ս ու լ ջ չ ա ց՝

- Պ. Գրիգոր Ծսայեան . . . . . Ծ. Կարգի
- Օր. Սոփիա Արովեանց . . . . . Ժ. « »
- Օր. Եղիսաբէթ Բարալեանց . . . . . Ժ. « »
- Տիկ. Կատարինէ Խաչատրեան Մամիկոնեանց . . . . . ԺԱ. « »

Գ Ր Ք Պ Կ Ն Բ Ն ա գ ի տ ու թ ե ա ն  
 Պ. Զաքարեայի Գրիգորեանց մուծեալ է ի շարս օժանդակ ընթերցանելի գրեանց աշակերտաց ծխական դպրոցաց ազգիս: